ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/0479/02/24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԻ ԱՌԱՐԿԱՅԻ ԵՎ ՀԻՄՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի փետրվարի 19-ին Երևան քաղաքում

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Դունամալյանը, քննելով ըստ հայցի՝ «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲ ընկերությանի ընդդեմ Ծաղկաձորի համայնքապետարանի, երրորդ անձ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության՝ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 27.12.2023թ. «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ գնումների մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 1061 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցի առարկան և հիմքը փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը,

Պ Ա Ր Զ Ե Տ

(I). Գործի դատավարական նախապատմությունը.

1.1. Հայցվորի ներկայացուցիչը 2024 թվականի հունվարի 23-ին հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ Ծաղկաձորի համայնքապետարանի, երրորդ անձ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության՝ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 27.12.2023թ. «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ գնումների մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 1061 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

1.2. Ներկայացված հայցադիմումը 23.01.2024 թվականին մակագրվել է դատավոր Ա. Դունամալյանին և դրան կից փաստաթղթերով 25.01.2024 թվականին հանձնվել դատավորի աշխատակազմին:

1.3. Դատարանը 2024 թվականի հունվարի 26-ին կայացրել է հայցադիմումը վարույթ ընդունելու, ապացույցներ պահանջելու, գործը դատական նիստում քննելու և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին որոշում:

1.4. Վերոնշյալ որոշման մեջ Դատարանը նշել է նշանակված դատական նիստի ժամանակը՝ 2024 թվականի փետրվարի 14-ին, ժամը՝ 16:00-ը, ինչպես նաև ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը՝ 2024 թվականի մարտի 07-ը:

1.5. Պատասխանողի ներկայացուցիչը 31.01.2024 թվականին ներկայացրել է (փոստային նամակ օպերատորին հանձնելու միջոցով) գրություն, որին կից ներկայացրել է ապացույցներ

որոնք 02.02.2024 թվականին մուտքագրվել են Դատարանի գրասենյակում և նույն օրը հանձնվել դատավորի աշխատակազմին:

1.6. Պատշաճ տեղեկացված լինելով 2024 թվականի փետրվարի 14-ին, ժամը՝ 16:00-ին նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին՝ գործի քննությանը ներկայացել են հայցվորը և հայցվորի ներկայացուցիչը, ինչպիսի պայմաններում Դատարանը, լսելով դատավարության մասնակիցների կարծիքը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 147-րդ հոդվածի 3-րդ մասով, որոշել է գործի քննությունն անցկացնել պատշաճ ծանուցված պատասխանողի բացակայությամբ: Այս դատական նիստի ընթացքում Դատարանի կողմից իրականացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածով նախատեսված դատավարակ գործողություններ:

1.7. Հայցվորի ներկայացուցիչը 16.02.2024 թվականին ներկայացրել է հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու մասին միջնորդություն (այսուհետ նաև՝ Միջնորդություն), որը նույն օրը դրան կից փաստաթղթերով հանձնվել է դատավորի աշխատակազմին:

(II). Դատարանի հիմնավորումները.

2.1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կարգով հայցվորը (դիմողը) իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվելու իր պահանջից, փոփոխելու հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը, (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորը հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ ներկայացնում է գրավոր միջնորդություն մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով՝ հայցի առարկայի փոփոխությունը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը, պահանջը փոփոխելը կամ լրացնելն է, այդ թվում՝ պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը, որը թույլատրում է առաջին ատյանի դատարանը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով՝ հայցի հիմքի փոփոխությունը հայցվորի կողմից հայցի հիմքում սկզբնապես դրված փաստերն այլ փաստերով փոխարինելն է, ինչպես նաև հայցի հիմքում դրված փաստերի շրջանակը ճշգրտելն է այն լրացնելու կամ պակասեցնելու եղանակով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ կայացնում է առանձին դատական ակտի ձևով որոշում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջնորդությունը քննարկվել և այն թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ որոշումը կայացվել է դատական նիստում՝ գործին մասնակցող անձանց ներկայությամբ:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը մերժում է, եթե այն բավարարելու դեպքում փոփոխվում է այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, կամ քննվող գործը դուրս է գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը փոփոխելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը բավարարելու դեպքում առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստում պատասխանողին տրամադրում է ոչ պակաս, քան մեկշաբաթյա ժամկետ՝ փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հայցի հիմքին և առարկային, նախկինում կայացրած որոշմամբ ձևավորել է այն դիրքորոշումը, որ հայցի առարկան այն նյութաիրավական պահանջն է, որը հայցվորը ներկայացնում է պատասխանողի դեմ, և որի

վերաբերյալ դատարանը որոշում է կայացնում: Ընդ որում, հայցի առարկայից պետք է տարբերել հայցի օբյեկտը, այսինքն՝ այն առարկան, որին ուղղված է հայցի առարկայի բովանդակությունը կազմող պահանջը: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը: Հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար: Միաժամանակ հայցի փաստական հիմքը վերջնականորեն որոշում է դատարանը՝ հիմնվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի վրա: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ հայցի փաստական հիմքից բացի հայցի տարրերի մեջ ներառվում է նաև հայցի իրավական հիմքը, որն այն իրավական նորմերն են, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը: Չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ, հայցվորը բացի փաստական հանգամանքներից կարող է հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց հիման վրա կողմերի միջև ծագել են համապատասխան իրավահարաբերություններ, և որը վերջինիս հիմք է տալիս առկա փաստական հանգամանքների հետ միասին ներկայացնել համապատասխան պահանջ (տե՛ս, օրինակ, թիվ ԵՇԴ/0473/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/2924/02/11 քաղաքացիական գործով 04.10.2013 թվականի որոշմամբ արձանագրել է, որ հայցն անհատականացվում է իր այս երկու տարրերի՝ հայցի հիմքի և առարկայի շնորհիվ: Հենց հայցի հիմքով ու առարկայով են որոշվում հայցերի նույնությունն ու տարբերությունը միևնույն սուբյեկտային կազմի դեպքում: ՀՀ օրենսդրությունն ընձեռում է հայցի հիմքն ու առարկան փոփոխելու հնարավորությունը, ընդ որում, հայցի առարկայի փոփոխությունը ենթադրում է հայցվորի՝ պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջի փոփոխություն, իսկ հայցի հիմքի փոփոխությունն այն հանգամանքների փոփոխությունն է, որոնց վրա հիմնվում է այդ նյութաիրավական պահանջը (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին կետ): ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ՀՀ օրենսդրությունը հայցի հիմքը և առարկան փոխելու լիազորությունը վերապահում է միայն հայցվորին, և տվյալ դեպքում դատարանն ուղղակի հայցվորի համապատասխան միջնորդության առկայության դեպքում կարող է որոշում կայացնել բավարարելու կամ մերժելու հայցվորի՝ հայցի հիմքը կամ առարկան փոխելու վերաբերյալ միջնորդությունը, սակայն սեփական նախաձեռնությամբ վերոնշյալ գործողությունները կատարելու լիազորություն դատարանը չունի: Բոլոր դեպքերում, եթե հայցի հիմքում ներառված են փաստական և իրավական հիմքերը, դատարանը գործով ապացուցման առարկան որոշում է հայցվորի վկայակոչած և ենթադրյալ կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմի և փաստական հանգամանքների համադրության հիման վրա: Հակառակ դեպքում, երբ դատարանը փոխում է հայցվորի վկայակոչած և ենթադրաբար կիրառման ենթակա նորմերը, դուրս է գալիս հայցի իրավական հիմքի շրջանակից:

Ուսումնասիրելով Միջնորդությունը՝ Դատարանն արձանագրում է, որ հայցվոր կողմը, որպես քաղաքացիական դատավարությունում տնօրինչական սկզբունքի բովանդակություն կազմող իրավունքի իրացում, ներկայացրել է հայցի առարկայի և հիմքի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդություն, որով ակնկալում է սույն գործով պատասխանողին սկզբունքորեն ներկայացված նյութաիրավական պահանջի (հայցապահանջի) և հայցի հիմքում սկզբունքորեն դրված փաստերի փոփոխություն՝ ի սկզբանե ներկայացված պահանջը լրացնելու և փաստերի շրջանակը լրացնելու միջոցով:

Այս մասով Դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ դատավարական օրենսգրքով նախատեսված կարգավորումներից հետևում է, որ դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո հայցվոր, հրացնելով քաղաքացիական դատավարությունում տնօրինչական

սկզբունքի բովանդակություն կազմող հայցի առարկան և (կամ) հիմքը փոփոխելու իր դատավարական իրավունքը, չի կարող ներկայացնել թեև սկզբնական հայցապահանջի հետ փոխկապակցված, սակայն այլ իրավունքի կամ օրենքով պահպանվող շահի պաշտպանությանն ուղղված նյութահիրավական պահանջ կամ այնպիսի պահանջ, որի քննությունն ենթակա չէ առաջին ատյանի դատարանին: Մասնավորապես՝ այսպիսի դեպքերում դատավարական օրենսգիրքն ուղիղ կերպով բացառում է հայցի առարկայի և (կամ) հիմքի փոփոխությունը, այլ կերպ ասած՝ դրանք հանդիսանում են հայցի առարկայի և (կամ) հիմքի փոփոխության անթույլատրելիության հիմքեր (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 5-րդ մաս):

Տվյալ դեպքում, հայցվորը հայցը սկզբնապես հարուցել է ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 27.12.2023թ. «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ գնումների մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 1061 որոշումն անվավեր ճանաչելու պահանջով, իսկ ներկայացված Միջնորդությամբ Դատարանին խնդրել է պատասխանողին ուղղված նյութահիրավական սկզբնական պահանջն ավելացնել և փոփոխել պահանջը հետևյալ կերպ. «Անվավեր ճանաչել ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 27.12.2023թ. «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ գնումների մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 1061 որոշումը և տվյալ որոշման ընդունման համար հիմք ընդունված ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի գնահատող հանձնաժողովի 18.12.2023 թվականի թիվ 3 արձանագրությունը», իսկ հայցի հիմքը լրացնել «ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի գնահատող հանձնաժողովի 18.12.2023 թվականի թիվ 3 արձանագրությամբ, համաձայն որի հանձնաժողովը որոշել է՝ «1.1. Ընդունել ի գիտություն, որ «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում և սահմանված կարգով չեն շտկվել «ԾՔ-ԷԱՃԾՁԲ-24/1» ծածկագրով ընթացակարգի փաստաթղթերի անհամապատասխանությունները: 1.2. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ի հայտը գնահատել՝ անբավարար և մերժել»» փաստերով:

Անդրադառնալով Միջնորդությամբ հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու հարցին՝ Դատարանն արձանագրում է, որ փոփոխվող պահանջն ոչ միայն փոխկապակցված է սկզբնապես ներկայացված պահանջին, այլև՝ ուղղված է այն իրավունքի պաշտպանությանը, որի նպատակով ի սկզբանե հայցվորի կողմից հարուցվել է հայցը:

Նման պարագայում Դատարանը կարծում է, որ այն սուբյեկտիվ իրավունքը (շահը), որի պաշտպանության նպատակով հայցվորն ի սկզբանե դիմել է Դատարան, քննարկվող փոփոխությունները թույլատրելու դեպքում մնալու է անփոփոխ՝ չառաջացնելով սույն գործի շրջանակներում քննության ենթակա նոր իրավունքի կամ օրենքով պահպանվող շահի պաշտպանությանն ուղղված արդեն իսկ առկա պահանջից տարբերվող այլ նյութահիրավական պահանջ կամ այնպիսի պահանջ, որի քննությունն ենթակա չի լինի Դատարանին:

Ավելին՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ հայցի առարկան փոփոխելու դեպքում պետական տուրքի գումարի չբավականացնող մասը գանձվում է հայցի առարկան փոփոխելիս՝ փոփոխված հայցի առարկային համապատասխան:

Տվյալ դեպքում, Դատարանը կարևոր է համարում նշել, որ հայցվոր կողմը Միջնորդությանը կից Դատարանին է ներկայացրել նաև 10000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարումը հավաստող ապացույցը, ինչպիսի պայմաններում Դատարանն արձանագրում է, որ հայցի առարկան փոփոխելուն ուղղված գործողություններ կատարելու հետ մեկտեղ այդ իրավունք իրացնողի համար սահմանված փոփոխված հայցի առարկային համապատասխան չափի պետական տուրքի գումար վճարելու պարտականությունը հայցվոր կողմը կատարել է՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 4-րդ մասի և «Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.1-րդ կետի կարգավորումները:

Նման պայմաններում Դատարանը գալիս է եզրակացության, որ հայցվորի

ներկայացուցչի կողմից Դատարան ներկայացված Միջնորդությունն ենթակա է բավարարման, մասնավորապես՝ պետք է թույլատրել հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը:

2.2. Միևնույն ժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը փոփոխելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը բավարարելու դեպքում առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստում պատասխանողին տրամադրում է ոչ պակաս, քան մեկշաբաթյա ժամկետ՝ փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար:

Դատարանը, ղեկավարվելով վերոնշյալ իրավակարգավորմամբ և հիմք ընդունելով այն, որ Միջնորդությունն ենթակա է բավարարման, կարծում է, որ սույն որոշումը ստանալուց հետո պատասխանող կողմին պետք է տրամադրել մեկշաբաթյա ժամկետ՝ փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար:

(III). Դատարանի եզրահանգումները.

Դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 139-րդ, 152-րդ, 170-րդ, 199-րդ, 200-րդ և 361-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը բավարարել.

1.1. թույլատրել հայցի առարկայի փոփոխություն, այն է՝ սկզբնապես ներկայացված հայցի առարկան փոփոխել հետևյալ կերպ. «Անվավեր ճանաչել ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 27.12.2023թ. «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ գնումների մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 1061 որոշումը և տվյալ որոշման ընդունման համար հիմք ընդունված ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի գնահատող հանձնաժողովի 18.12.2023 թվականի թիվ 3 արձանագրությունը»,

1.2. թույլատրել հայցի հիմքի փոփոխություն, այն է՝ հայցի հիմքում դրված փաստերը լրացնել հետևյալ փաստերով. «ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի գնահատող հանձնաժողովի 18.12.2023 թվականի թիվ 3 արձանագրությամբ, համաձայն որի հանձնաժողովը որոշել է՝ «1.1. Ընդունել ի գիտություն, որ «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկտում և սահմանված կարգով չեն շտկվել «ԾՔ-ԷԱՃԾՁԲ-24/1» ծածկագրով ընթացակարգի փաստաթղթերի անհամապատասխանությունները: 1.2. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ի հայտը գնահատել՝ անբավարար և մերժել»»:

2. Պատասխանողին տրամադրել սույն որոշումը ստանալուց սկսած մեկշաբաթյա ժամկետ՝ փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ**